# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4.1
# «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ 22.08.2016թ. ԹԻՎ 371-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

| | |
|---|---|
| «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ (ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) | 15 նոյեմբերի 2016թ, ժամը 10:30 |
| «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ (ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) | 21 նոյեմբերի 2016թ, ժամը 10:00 |

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**

Կ. Հակոբյան — Գլխավոր հաշվապահ

**Հանձնաժողովի անդամներ՝**

Է. Գասպարյան — Հաշվապահ

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Մ. Եսայան — Գնումների համակարգող

Հանձնաժողովի անդամ Ա.Սարգսյանը գտնվում էր ժամանակավոր անգործունակության արձակուրդում և նիստին չմասնակցեց:

**Օրակարգ**

«ՀԱՆ-ՄԵԸԾՁ-01/16» ծածկագրով մրցակցային երկխոսության գնման ընթացակարգի՝ մասնակիցների կողմից ներկայացված երկրորդ փուլի հայտերի գնահատում:

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը ՝ մեկ թվով արտահայտված՝ 7 000 000 (յոթ միլիոն ) ՀՀ դրամ:

Հրապարակվեցին հայտ ներկայացրած նախաորակավորված մասնակիցների անվանումները՝

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
«Ջեներալ Ստանդարտ Քընսալթինգ» ՍՊԸ
«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ
«Ասատրյանս» ՍՊԸ
«ԹՄ Աուդիտ» ՓԲԸ

Հանձնաժողովի անդամները գնահատեցին մասնակիցների ներկայացրած ծրարները:

Համաձայն գնահատման՝

1. «Ջեներալ Ստանդարտ Քընսալթինգ» ՍՊԸ, «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ, «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ և «Ասատրյանս» ՍՊԸ կողմից ներկայացված ծրարները համապատասխանում էին հրավերով սահմանված պահանջներին :

*Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:*

2. «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ և «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ կողմից ներկայացված ծրարները չէին համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին :

Հանձնաժողովը որոշեց մերժել «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ և «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ հայտերը և հայտեր պարունակող ծրարները փակ վիճակում վերադարձնել հայտեր ներկայացրած մասնակիցներին :

*Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:*

Հանձնաժողովի նախագահը ըստ ստացման հերթականության բացեց մասնակիցների հայտերը, և հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

Համաձայն գնահատման՝

1. «Ջեներալ Ստանդարտ Քընսալթինգ» ՍՊԸ, «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ, «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ և «Ասատրյանս» ՍՊԸ կողմից ներկայացված ծրարներում առկա էին հրավերով պահանջվող փաստաթղթերը և դրանք կազմված էին համապատասխան հրավերով սահմանված վավերապայմաններին:

*Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:*

2. «Ջեներալ Ստանդարտ Քընսալթինգ» ՍՊԸ կողմից ներկայացված ծրարում բացակայում էր հրավերով սահմանված փաստաթղթերից մեկը՝ Հավելված 2-ը:

Հանձնաժողովը որոշեց հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել Մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

*Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:*

Հանձնաժողովի նախագահը մասնակիցների կողմից ներկայացված ծրարներից առանձնացրեց մասնակիցների գնային առաջարկներ պարունակող ծրարները և դրանք առանց բացվելու դրվեցին առանձին ծրարի մեջ, որը սոսնձվեց և փակվեց, տուփի վրա ստորագրեցին գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը, որն այն վերցրեց ի պահ և պարտավորվեց ապահովել դրա առանձնացված պահպանումը՝ հատուկ պահոցում:

Մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում հանձնաժողովը արձանագրեց, որ «Ջեներալ Ստանդարտ Քընսալթինգ» ՍՊԸ և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ կողմից ներկայացված՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

Հանձնաժողովը որոշեց հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել Մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**Հանձնաժողովը որոշեց՝**

1. Կասեցնել նիստը՝ տալով մասնակիցներին անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն:

2. Հանձնարարարել գնման համակարգողին ներկայացնել հարցում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև

<<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

3. Հանձնաժողովի աշխատանքները վերսկսել վերոհիշյալ հարցման պատասխանը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ բայց ոչ ուշ քան 21.11.2016թ. ժ.11.00:

***Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:***

21.11.2016թ. ժ.10.00 հանձնաժողովը վերսկսեց իր աշխատանքները:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց մասնակիցների կողմից ներկայացված, անհամապատասխանությունները շտկող փաստաթղթերը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը:

Հանձնաժողովը գնահատեց մասնակիցների հայտերը հրավերով սահմանված պահանջներին համապատասխան՝ համաձայն ստորև ներկայացված աղյուսակի.

| **Գնահատման չափանիշը** | **Կազմակերպության անվանումը** | | | |
|---|---|---|---|---|
| | **«Ջեներալ Ստանդարտ Քընսալթինգ» ՍՊԸ** | **«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ** | **«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ** | **«Ասատրյանս» ՍՊԸ** |
| Մասնագիտական փորձառություն (Առկա է կամ բացակայում է) | Առկա է | Առկա է | Առկա է | Առկա է |
| Ֆինանսական միջոցներ (Առկա է կամ բացակայում է) | Առկա է | Առկա է | Առկա է | Առկա է |
| Աշխատանքային ռեսուրսներ (15-ից 25 միավոր) | 25 | 15 | 25 | 20 |
| Տեխնիկական առաջարկ (55-ից 75 միավոր) | 55 | 75 | 55 | 75 |
| ***Ընդամենը*** | **80** | **90** | **80** | **95** |

***Հանձնաժողովը որոշեց՝***

1. Հրավիրել բավարար գնահատված մասնակիցներին գնային առաջարկների բացման նիստին, որը տեղի կունենա ք. Երևան-42, Ի.Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ հասցեում, «նոյեմբերի» «28» -ին ժամը «10.30»-ին:

Կ. Հակոբյան — Հանձնաժողովի նախագահ

Է. Գասպարյան — Հանձնաժողովի անդամ

Մ. Եսայան — Հանձնաժողովի քարտուղար